Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-22/9-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

02 հուլիսի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ասրյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Սարգսյանը, Ա. Սիմոնյանը, Գ. Մելիքսեթյանը և Ռ. Գաբրիելյանը:
Քարտուղար՝ Ս. Գալստյանը:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյան, Բամբակաշատ, Շենավան և Գետաշեն համայնքների խորքային հորերի վերականգնման աշխատաքների ձեռքբերման ՋԿ-ԳՀԱՇՁԲ-22/9-Ա ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2022 թվականի հուլիսի 1-ին, ժամը 16:00-ին:

ՋԿ-ԳՀԱՇՁԲ-22/9-Ա ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
«Կարսիր» ՍՊԸ ենթակապալառու «ՎԷՌԼ» ՍՊԸ	ք. Վաղարշապատ, Բաղրամյան 1 փակ. 10տ. հեռ. 094 222709	vahe159@mail.ru

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

հհ	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 **նախահաշվային արժեք – 10 953 240 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Բամբակաշատ համայնքի գազի կալոնկա խորքային հորի վերականգնման աշխատանքներ				
	Ոչ մի հայտ չի ներկայացվել			
Չափաբաժին 2 **նախահաշվային արժեք – 16 814 750 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Մյասնիկյան խորքային հորի վերականգնման աշխատանքներ				

	Ոչ մի հայտ չի ներկայացվել			
Չափաբաժին 3 **նախահաշվային արժեք – 10 371 030 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Շենավան համայնքի Վարդանյանի բաժանարար խորքային հորի վերականգնման աշխատանքներ				
1	«Կարսիր» ՍՊԸ	9 852 478	-	9 852 478
Չափաբաժին 4 **նախահաշվային արժեք – 10 671 420 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Գետաշեն համայնքի /Կոմսոմոլի այգի/ խորքային հորի վերականգնման աշխատանքներ				
1	«Կարսիր» ՍՊԸ	10 137 849	-	10 137 849

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԳՀԱՇՁԲ-22/9-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակից «Կարսիր» ՍՊԸ-ի հայտով ներկայացված չէ հրավերով պահանջվող ծավալաթերթ-նախահաշիվը: Հավելված 1.1-ում (սարքերի և սարքավորումների նկարագիր) ներկայացված ցանկը չի համապատասխանում ՋԿ-ԳՀԱՇՁԲ-22/9-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող սարքերի և սարքավորումների ցանկին, որը ներկայացված է հրավերի 2-րդ մասի 7-րդ հավելվածի (Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր) Հավելված 2.1-ում: Մասնակից «Կարսիր» ՍՊԸ-ի և ենթակապալառու «ՎԷՌԼ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը չի համապատասխանում հրավերի 2-րդ մասի 7-րդ հավելվածի (Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր) 3.4.1 կետի պահանջներին՝ հստակեցված չէ Կապալառուի և Ենթակապալառուի կողմից կատարվող աշխատանքները և աշխատանքների չափը: Ենթակապալի պայմանագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ (հրավերի 8.9 կետ):

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Համաձայն ՋԿ-ԳՀԱՇՁԲ-22/9-Ա ծածկագրով հրավերի 8.9 և 8.10 կետերի՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակից «Կարսիր» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը (08.07.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:
2. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-22/9-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (ոչ մի հայտ չի ներկայացվել):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար անգործության ժամկետ կիրառելի չէ:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	----------	Ս. Ասրյան
Անդամներ	----------	Կ. Սարգսյան
	----------	Ա. Սիմոնյան
	----------	Գ. Մելիքսեթյան
	----------	Ռ. Գաբրիելյան
Քարտուղար	----------	Ս. Գալստյան